ՍՈՂՀԱԼԳԻՊԱԿԱՆ

ՄԱՀԱՋՈ-

Հոկտեմբերի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացավ Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանից, որ Երուսաղեմում երկարատեւ հիվանդությունից հետո կյանքի 93-րդ տարում ի Տեր ննջեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագույն հոգեւոր խորհուրդը եւ Հայ Եկեղեցու ողջ եկեղեցական դասը սգում են բազմավաստակ Պատրիարք Սրբազան Հոր մահը՝ աղոթելով, որ Տերը Սուրբ Հոգու մխիթարությունը պարգեւի հավատավոր մեր ժողովրդին, Իր խնամքի եւ օրհնության ներքո պահի Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռը եւ նրա զինվորյալ միաբանությունը:

Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը ծնվել է 1919 թ. փետրվարի 16-ին, Բաղդադի հյուսիսում (Իրաք)՝ Բագուբա քաղաքի մոտ գտնվող փախստականների ճամբարում: Բաղդադի Սրբոց Թարգմանչաց հայկական դպրոցում նախակրթական ուսումն ավարտելուց հետո ընդունվել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի Սրբոց Հակոբյանց ժառանգավորաց վարժարան:

1936 թ. օգոստոսի 2-ին սարկավագ է ձեռնադրվել ձեռամբ երջանկահիշատակ Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի:

1939 թ. հուլիսի 23-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ստանալով Թորգոմ անունը:

1939-46 թթ. Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանում տարբեր պաշտոններ է վարել.

աշխատել է Պատրիարքարանի «Սիոն» ամսագրի խմբագրությունում, ինչպես նաեւ եղել է ճեմարանի փոխտեսուչ:

1946 թ. հուլիսին մեկնել է ԱՄՆ եւ նշանակվել Հյուսիսային Ֆիլադելֆիայի (Փենսիլվանիա) Ս. Երրորդություն հայկական եկեղեցու հոգեւոր հովիվ: 1951 թ. Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդի կողմից նշանակվել է թեմի առաջնորդական փոխանորդ:

1954 թ. Հյուսիսային Ֆիլադելֆիայում մեկ տարով վերսկսելով ծառայությունը՝ Հայր Թորգոմը վերադարձել է Երուսաղեմ եւ նշանակվել ճեմարանի տեսուչ: Նա նաեւ վարել է Պատրիարքարանի դիվանապետի պարտականությունները:

1960 թ. վերադառնալով ԱՄՆ՝ ուսումը շարունակելու նպատակով ընդունվել է Քեմբրիջի Եպիսկոպոսական Աստվածաբանական Դպրոց (Մասաչուսեթս):

1962 թ. ընտրվել է Հայ Եկեղեցու Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ:

Նույն թվականի հոկտեմբերի 14-ին, ձեռամբ երջանկահիշատակ Ամենայն Հայոց Վազգեն Ա. Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս:

1966 թ. ապրիլին, Արեւմտյան թեմի առաջնորդի պաշտոնում 4 տարի ծառայելուց հետո Թորգոմ եպիսկոպոսը ընտրվել է Հայ Եկեղեցու Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ:

Երկու տարի անց Վազգեն Ա. Կաթողիկոսի կողմից նրան շնորհվել է Արքության պատիվ:

Արեւելյան թեմի առաջնորդի պաշտոնում 24 տարի ծառայելուց հետո Թորգոմ արքեպիսկոպոսը 1990 թ. մարտի 22-ին ընտրվել է Երուսաղեմի 96-րդ Պատրիարք:

1994 թ. օգոստոսի 19-ին Վազգեն Ա. Կաթողիկոսի մահից հետո Ամենապատիվ Սրբազան Հայրը նշանակվել է Կաթողիկոսական Տեղապահ:

Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը ստացել է մի շարք ակադեմիական պարգեւներ, արժանացել է Նյու Յորքի Ընդհանուր Աստվածաբանական Ճեմարանի պատվավոր դոկտորի կոչման:

1986 թ. ստացել է նաեւ Ամերիկայի երկու գլխավոր պարգեւները՝. «Ազատության Արծաթ» եւ «Էլիզ Այլընդ» պատվո շքանշանները:

Թորգոմ Պատրիարքը մեծավանդ է ունեցել միջազգային էկումենիկ հարաբերությունների զարգացման գործում: Նա ծառայել է ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Ժողովի հանձնաժողովում, նախագահել է «Կրոնն ամերիկյան կյանքում» խորհուրդը: Եղել է նաեւ «Խաղաղության կոչ» հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ:

Թորգոմ Պատրիարքը հեղինակ է 20 մենագրությունների, այդ թվում՝ բանաստեղծական ժողովածուների, հայկական Ս. Պատարագի ուսումնասիրություն, հայոց Մեծ Եղեռնին նվիրված գրքեր եւ Երուսաղեմի սուրբ վայրերի մանրամասն ուղեցույց: Պատրիարք Հայրը ճանաչված կոմիտասագետ էր:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՆԳԻՍՏ
ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՄ Ս. ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԲԱՋՄԱՎԱՍՏԱԿ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ (1990-2012)

Սրբոց Յակոբեանց վշտակիր Միաբանութիւնը սրտի կսկի-ծով կը յայտնէ մահը իր սիրեցեալ Հօր եւ Պետին՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Մանուկեանին, որ ի Տէր հանգեաւ Ուրբաթ, 12 Հոկտեմբեր, 2012, առաւօտեան ժամը 9:30-ին:

Հայոց Ցեղասպանութեան պատճառով, հայկական Վան նահանգէն տեղահանուած ծնողաց զաւակ՝ Աւետիս, կը ծնի Իրաքի անապատի աւազներուն վրայ 1919-ին, առաջին օրէն համտեսելով կեանքի կիզիչ դառնութիւնը: Բայց ծնողաց ունեցած հաւատքն ու վաղուան յոյսը զինք թրծեցին նոյն հոգիով եւ եռանդով: Ցեղազային, ուրիշներու նման, ան եւս սիրեց Հայ գիրն ու գրականութիւնը, եւ ծառայութեան ասպարէզ ընտրեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Իր մատղաշ տարիքին, Թորգոմ Պատրիարք սնաւ եւ հասակ առաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց շնորհաբաշխ յարկին տակ եւ իր տքնաջան աշխատանքին ու նուիրեալ ոգիին շնորհիւ ան կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ 1939-ին: Տարիները ցոյց տուին, թէ ան տէր էր խօսուն եւ զգայուն սրտի մը, որ համընթաց կը քալէր իր մտքի թռիչքներուն հետ: Կը սիրէր գրել եւ խօսիլ ինչ որ լաւն էր եւ ապրեցնող: Ան շունչ էր երիտասարդ սերունդին համար իր խաղաղասէր, քաջալերող եւ ոգեւորող նկարագրով:

Կրթական մարզի մէջ պահանջկոտ եւ հետապնդող էր՝ սիրով, կարգապահութեամբ եւ օրինա-պահութեամբ. ան գիտէր եւ կը գնահատէր ժամանակի սղութիւնը եւ լաւագոյնս կ՚օգտագործէր զայն յօգուտ բոլորին: Հոգելոյս Սրբազանը մեծապէս գնահատելի էր նաեւ իր տարած բեղուն աշխատանքով մեր եկեղեցական երաժշտութեան ուսուցման մէջ, ուր տարիներով զբաղեցաւ երկսեռ երգչախումբեր կազմելով եւ գեղեցկացնելով եկեղեցւոյ երգեցողութիւնը:

Իր քաղցր բնաւորութեամբ ան կրցաւ իր վրայ հրաւիրել շատերուն միտքն ու սիրտը եւ առ այդ ան բարձրացաւ թեմական առաջնորդական պաշտօնին՝ զոր վարեց երկար տարիներ, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան եւ Արեւելեան թեմերուն մէջ: Պաշտօնի բերումով ան կարողացաւ նաեւ մուտք գործել միջեկեղեցական ասպարէզէն ներս, ուր գնահատելի կերպով կարողացաւ յաչս օտարներուն ներկայացնել եւ ծանօթացնել Հայ ազգն ու եկեղեցին: Իր տարած աշխատանքներուն եւ ունեցած յաջողութիւններուն համար ան սիրուեցաւ եւ գնահատուեցաւ բոլորէն:

Եկեղեցական ասպարէզին մէջ գրեթէ բոլոր ճանապարհները բաց էին իրեն համար: Երբ ներ-կայացաւ աթոռին, ան արժանաւորապէս ընտրուեցաւ Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռին 1990-ին, իբրեւ 96-րդ Գահակալը, որ վարեց 22 տարիներ: Իբրեւ գահակալ ան մտա-հոգ էր թէ ինչպէս պէտք էր պահել եւ զօրացնել Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնն ու Վանքը ի հեճուկս ժամանակի առթած դժուարութիւններուն

եւ անակնկալներուն: Սրբատեղեաց անցեալի պատմութիւնը իր խառնակ եւ պրկուած, ոխակալ եւ անզիջող նկարագրով ամէն վայրկեան կը խօսէր եւ կը պատկերաւորուէր Պատրիարքին մտքին ու աչքերուն առաջ: Ան կը զգար եւ կը գիտակցէր որ յատուկ քաջութիւն եւ հնարամտութիւն կը պահանջէր Սրբատեղեաց վիճակը պահել անկորուստ, բայց զօրաւոր: Բոլորին յայտնի է, թէ Երուսաղէմը իր պատմութեամբ, դժուարութիւն-ներով եւ անուշութեամբ անկրկնելի է այլ տեղ երկրագնդի վրայ: Իրապէս մեծ բախտաւորութիւն եւ մեծ պատիւ է ապրիլ եւ ծառայել Երուսաղէմի Քրիստոսակոխ վայրերուն մէջ: Մեր սիրեցեալ Թորգոմ Պատրիարք իր կատարած աշխատանքին եւ նուիրուածութեան լումայով կարողացաւ գրաւել իր արժանի տեղը Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պատմութեան մէջ: Իր ունեցած սիրոյն, նուիրուածութեան, աշխատասիրութեան եւ յաջողութիւններուն համար ան մեծապէս գնա-հատուեցաւ եւ պարգեւատրուեցաւ ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետութեան Նախագա-հէն եւ Ամենայն Հայոց Հայրապետէն եւ այլ երեւելի հաստատութիւններէն:

Այսօր, եփին թողած իր գեղեցիկ վաստակը, մեզմէ յաւէտ կը բաժնուի մեր Սուրբ Աթոռին նուիրեալ Գահակալը՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Մանուկեան:

Թող իր սէրն ու ոգեւորող շունչը վարակիչ հանդիսանայ իր յաջորդներուն:

Կ՚աղօթենք որ Աստուած խաղաղութեան մէջ հանգչեցնէ մեր Պատրիարք Սրբազան Հօր տառա-պած հոգին:

Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 21-ին եւ 22-ին Երուսաղեմի Հայոց Պատրիարք հոգելոյս Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հուղարկավորության արարողություններին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը եւ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Հուղարկավորությանը Նավասարդ Սրբազանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դամբանական խոսքը, որը ներկայացվում է ստորեւ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց»:

(Յայտ. Բ. 10)

Սգակիր հոգեւոր եղբայրներ, բարեպաշտ ժողովուրդ,

Այս տխուր օրը վշտալի սրտով աղոթք ենք բարձրացնում առ Աստված Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հոգու հանգստության եւ խաղաղության համար:

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց»: Մեր Տիրոջ այս խոսքերը հավիտենական կյանքի բերկրալի խոստումն են բերում յուրաքանչյուր հավատացյալի, ով ապրում է խորին հավատքով ու քրիստոսասեր ոգով՝ բարի ու արդար գործերով ծառայելով մարդկանց եւ իր ժողովրդին: Ի Տեր հանգուցյալ Թ-որգոմ Պատրիարքի ողջ կյանքն այդպիսի նվիրում ու անհոգնաբեկ սպասավորություն եղավ Բարձրյալն Աստծուն եւ հարազատ ժողովրդին: Հոգելույս Պատրիարքը մինչեւ մահ հավատարիմ մնաց իր կոչմանն ու առաքելությանը, Եկեղեցուն ու ազգին ամբողջանվեր ծառայության ուխտին, որով եւ Տիրոջ խոսքի համաձայն՝ պիտի սպանա կյանքի պսակը հավիտենական երանելի օթեւաններում: Սիրելի հավատավոր զավակներ Մեր, այսօր, երբ տխուր են մեր սրտերը, ու սուգի մեջ ենք սիրելի Պատրիարքից բաժանումի այս ծանր պահին, հավատում ենք, որ իր հոգին ուրախությամբ սլանում է դեպի Փրկիչը մեր Հիսուս Քրիստոս եւ հավերժական կյանքի հանգրվանում Աստծո առջեւ պիտի ներկայանա առաքելական խոսքի վկայությամբ. «Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքը, պահեցի հավատը» (Բ. Տիմ. Դ. 7):

Մեր հոգիներում այս պահին Պատրիարք Սրբազանի հետ կապված ջերմ հիշողություններն են եւ մեր մտահայացքի առջեւ՝ նրա կյանքի վաստակաբեռն ուղին: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարանի հոգեւոր դարբնոցում է թրծվել ոգին բարեհիշատակ Պատրիարքի: Հոգելույս Թ-որգոմ Պատրիարքը երիտասարդ հասակում՝ քսանամյա տարիքում, Սուրբ Հակոբոս գլխադիր առաքյալի մասունքակիր տաճարում ծնրադիր ուխտադրությամբ սպանձնեց կուսակրոն հոգեւորականի առաքելությունը ազգային-եկեղեցական մեր անդաստանում: Ավելի քան յոթ տասնամյակներ ազգասիրության ու հայրենասիրության ոգով նա արդյունազարդեց իր սպասավորությունը Երուսաղեմի Պատրիարքությունում, ապա՝ որպես առաջնորդ Միացյալ Նահանգների Արեւմտյան, այնուհետեւ Արեւելյան թեմերում: Ընտրվելով Երուսաղեմի Հայոց Պատրիարք՝ լուսահոգի Թ-որգոմ Սրբազանը վերադարձավ իր հոգեւոր ծննդավայրը, որտեղ տասնամյակներ շարունակ նախանձախնդրությամբ, իր խրոխտ ու վեհանձն ոգով ջանք ու եռանդ ներդրեց՝ ի շինություն Պատրիարքության եւ ի պահպանություն Սուրբ տեղյաց մեր նվիրական սրբությունների: «Սրուեր են կեանք մեր ի վերայ երկրի»,- ասում է Հոբ երանելին (Յոբ Ը. 9)՝ նկատի ունենալով երկրավոր կյանքի անցողիկությունն ու կարճատեւությունը հավերժության համեմատ: Թ-որգոմ Պատրիարքի առաքելությունը, սակայն, լույս եղավ մեր ժողովրդի հոգեւոր-եկեղեցական կյանքում եւ իր պայծառ հետագիծը թողեց մեր Եկեղեցու պատմության եւ հավատավոր հայորդյաց բարի հիշողությունների մեջ: Երուսաղեմ՝ Տերունական վայրերին երկրպագության այցելող բազմաթիվ հայ ուխտավորներ Մայր Հայրենիքից եւ աշխարհի տարբեր երկրներից այստեղ մխիթարվում էին Պատրիարքի քաղցր ու օրհնաբեր խոսքով, զորանում հավատքով՝ բարի ընթացքով ու երկնահաճո գործերով զարդարելու իրենց ասպվածաշնորհ կյանքի ուղին:

Այսօր փակվում է երկրավոր կյանքի մատյանը հանգուցյալ Թ-որգոմ Պատրիարքի, սակայն նա շարունակում է խոսել մեզ հետ իր գրքերի, բանաստեղծական ժողովածուների,

մենագրությունների ու թարգմանությունների միջից, որոնցում ծրարել է իր հոգու խորին հավատքը, մտածումներն ու զգացումները՝ իր ընթերցողներին քաջալերելով բարու, արդարության ու ազնվության եւ ազգային սրբազան արժեքների հանդեպ անսնվազ նվիրումի:

Սիրելիներ, Սուրբ Հոգու մխիթարության շնորհները հայցելով մեզ ամենքիս՝ Մեր քաջալերանքի խոսքն ենք ուղղում Սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանության անդամներին, ովքեր նվիրյալ պահապաններն են այս Սուրբ Աթոռի եւ պաշտպանները Սուրբ տեղյաց մեր սրբությունների: Թող Բարձրյալն Աստված միշտ զորակից լինի ձեզ, որպեսզի վախճանյալ Պատրիարք Սրբազանի երկարամյա նախանձախնդիր ծառայության օրինակով հավելեք փառքն ու պարծանքը Երուսաղեմի Հայոց Պատրիարքության եւ երկնառաք օգնականությամբ պայծառ պահեք Սրբոց Հակոբյանց միաբանությունը՝ աղոթական ջանքեր բերելով համայն հայության հոգեւոր շինության ու առաջընթաց կյանքի համար:

Ի խորոց սրտի աղոթք ենք վերառաքում առ Ամենողորմն Աստված, որ երկնից լուսեղեն օթեւաններում քաղցրությամբ ընդունի եւ աջակողմյան դասում՝ երանյալ սրբերի շարքում, հանգչեցնի հոգին վաստակաշատ ու հավատարիմ Իր ծառայի՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, եւ Սուրբ Հոգու շնորհներով մխիթարություն պարգեւի հավատավոր համայն մեր ժողովրդին:

Լույս, աղոթք եւ օրհնություն մեր սիրելի Թորգոմ Պատրիարքի անմոռաց հիշատակին:

«Յիշեսցէ Տէր զհոգի ծառային Իւրոյ եւ յանգուսցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

Վշտակից սիրով եւ օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԷՆ Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՒ Տ. ԲԱԲԳԷՆ Ա. ՔՀՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի երիցագոյն հոգեւորականը՝ Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան, յետ երկարատեւ հիւանդութեան, իր մահկանացուն կնքեց Երկուշաբթի Հոկտեմբեր 15, 2012, երեկոյեան՝ Արլինկթըն Մասսաչուսէցի իր բնակարանին մէջ: Տէր Հայրը 103 տարեկան էր:

Տէր Բաբգէն Հայ Եկեղեցւոյ ծառայած է աւելի քան 60 տարիներ՝ իր հովուական պարտականութեանց կողքին վարելով զանազան պաշտօններ: Ան օրինակելի եկեղեցական մը եղած է՝ իր առաքելութեան գիտակից եւ մարդկային ազնիւ նկարագիրով եւ ջերմ պաշտպանը հանդիսացած է եկեղեցական եւ ազգային աւանդութեանց պահպանման:

Տ. ԲԱԲԳԷՆ Ա. ՔՀՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ



Տ. Բաբգէն Ասաղ Քահանան, աւազանի անունով Մագսուտ, ծնած է Ափանա, Թուրքիա, 1909 թուականին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն ֆրանսական վարժարանին մէջ: Կիլիկիոյ պարպումին հետեւանքով կը տեղափոխուի Լառնաքա, Կիպրոս, ուր կը յաճախէ իտալական եւ ամերիկեան վարժարաններ: Կը բանայ իր անձնական դպրեւանը եւ կը հրատարկէ «Ովասիս» ամսաթերթը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի դպրեվանքը կը յաճախէ 1930-1932 տարիներուն: Երկու տարի կը վարէ Ճիւնիի Ազգային Արամեան Վարժարանի տնօրէնութիւնը: 1934-ին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Բարգէն Կաթողիկոսի թելադրութեան վերադարձած է Անթիլիաս իր ամբողջ ժամանակը տրամադրելու տպագրական գործին: Այս տպարանին մէջ տարիներով տպած է «Հասկ» ամսաթերթը եւ բազմաթիւ գիրքեր՝ որոնց կարգին «Կիլիկիոյ Կաթողիկոսաց Պատմութիւն»ը: 1936 թուականին կ՚ամուսնանայ Ազատուհի Գասապեանի հետ. անոնք կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Արփի եւ Գիրգոր (Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան): 1944-45 տարիներուն եղած է Պէյրութի «Զարթօնք» օրաթերթի խմբագիր: Ընդառաջելով Երուսաղէմի օրուան Պատրիարք Տ. Կիւրեղ Իսրաէլեանի հրաւէրին՝ 1946-ին կը ստանձնէ Սրբոց Յակոբեանց վանքի տպարանի վարիչի պաշտօնը եւ կը կանոնաւորէ «Սիոն» ամսաթերթի հրատարակութիւնը:

Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանցի յորդորով կը հետեւի Անթիլիասի քահանայից դասարանին եւ ձեռամբ Տ. Խորէն Եպս. Բարոյեանի քահանայ կը ձեռնադրուի 1949 տարուան Դեկտեմբեր 4-ին՝ Պոսթոն Մասսաչուսէցի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ

համար: Շրջան մը կը վարէ Պէյրութի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովուութիւնը: Կ՚ըլլայ նաեւ ուսուցիչ եւ փոխ տեսուչ Անթիլիասի Դպրեվանքին: Տասը տարի կը վարէ Պէյրութի Նոր Մարաշ թաղամասի Կիրակնօրեայ Դպրոցի տեսչութիւնը, կ՚ըլլայ վարիչ քարտուղար Լիբանանի Կիրակնօրեայ Դպրոցներուն, եւ կը հիմնէ 16 Կիրակնօրեայ Դպրոցներ Լիբանանի եւ մերձակայ աւաններուն մէջ: Եղած է նաեւ Կիրակնօրեայ Դաստիարակութեան Խորհուրդի անդամ:

Մագսուտեան ընտանիքը Միացեալ Նահանգներ կը տեղափոխուի 1951 թուականին եւ 1952 տարուան Յունուար 1-էն սկսեալ Տէր Հայրը կը սպանձնէ Պոսթոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հովուութիւնը: Դաշտօն մը՝ զոր կը վարէ մինչեւ 1974 թուականը, եւ ապա կը նշանակուի նոյն եկեղեցւոյ «Պատուակալ Հովիւ»: Իր շրջանին է որ կը կառուցուի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ այժմու գեղակերտ կառոյցը, որուն օծումը կը կատարուի 1961 թուականին: 1986 թուականին Տէր Հայրը կը կոչսնցնէ Երէցկին Ազատուհին: Տարիքի բերումով Տէր Բարգէն հանգստեան կը կոչուի 1992 թուականին: Տէր Հայրը ութը տարի եղած է Թեմական Խորհուրդի անդամ եւ երկու անգամ ալ Թեմական Պատգամաւորական Ժողովի ատենապետ: Ան վարձատրուած է լանջախաչով եւ Աւագութեան աստիճանով եւ ծաղկեայ փիլոն կրելու իրաւունքով: 2000 թուականին Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանը մեծարած է Տէր Հայրը իր քահանայական ձեռնադրութեան 50-ամեակին առիթով եւ անոր յանձնած է «Հոգեւոր Առաջնորդութեան Մրցանակ»ը:

Տէր Բարգէն ձեռնարկած է մանկական մատենաշարի մը եւ հրատարակած առաջին թիւը «Հէքեաթներ եւ Պատմուածներ» խորագիրով, աշխատակցած է Միջին Արեւելեքի զանազան թերթերուն: Վեց տարի շարունակ կանոնաւոր սիւնակ պահած է «Պայքար» օրաթերթին մէջ «Աւետարանի Յոլքեր» խորագիրով: Ան հեղինակած եւ հրատարակած է հետեւեալ գիրքերը՝ «Յիսուս Քրիստոսի Առակները» (1991), «Ճանապարհ առ Քրիստոս» (1995), «Աւետարանի Յոլքեր» (2001) եւ «Հոգեկան Առաքինութիւնն եւ Նկարագրի Թերութիւններ» (2002):

Տ. Բարգէն Ա. Քհնյ. Մագսուտեան իր երին կը ձգէ դուստրը՝ Տկն. Արփի Հայկազ, զաւակը՝ Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան, չորս թոռներ եւ ինն ծոռներ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ